



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 397 - Ա

15 հոկտեմբերի 2019 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 360-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԵՐՄԱՅՈՒԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԲԱԾԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 360-Լ որոշման պահանջները

**Կարգադրում եմ՝**

1. <<Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում>> ծրագրի շրջանակներում պայմանագրային հիմունքներով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ֆերմեր Էդիկ Նալբանդյանին տրամադրված սերմացուների դիմաց սահմանված չափով վերադարձվող սերմանյութը ընդունելու և անվճար հիմունքներով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներին տրամադրելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- |                 |   |
|-----------------|---|
| Մ. Պետրոսյան    | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ, խմբի ղեկավար |
| Ա. Զրաղացպանյան | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ    |
| Ռ. Բաղեյան      | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ    |
| Գ. Մարգարյան    | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ    |
| Կ. Շահբազյան    | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ   |

2. Աշխատանքային խմբին /խմբի ղեկավար Մ. Պետրոսյան/

1) <<Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում>> ծրագրի շրջանակներում պայմանագրային հիմունքներով էդիկ Նալբանդյանին տրամադրված սերմացուների դիմաց վերադարձված սերմանյութը ընդունել՝

8400 կգ հնդկացորեն

1600կգ ոլոռ

6200կգ ոսպ

700կգ սիսեռ

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տնօրինմանը հանձնված սերմացուներն անվճար հիմունքներով տրամադրել մարզի համայնքներին՝ համաձայն կից հավելվածի.

3) սերմանյութի բաշխումը կատարել ֆերմեր էդիկ Նալբանդյանի պահեստից.


4) սերմացուների բաշխման գործընթացն ավարտելուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը հանձնարարել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Համբարձում Համբարձումյանին:

15.10.2019



ՄԱՐԶՊԵՏԻՆ  
ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

X 

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓՈՒՆԱՐԻՆՈՂ՝ Подписано: GRIGORYAN NAREK 1610910273

ք. Գավառ